

**Հաստատված է**  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ»  
դիրտորդ խորհրդի որոշմամբ

**Գրանցված է**

Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկում

**Գլխավոր տնօրեն՝ Վահան Ստեփանյան**

**Նախագահ՝ Մարտին Գալստյան**

---

«16» փետրվարի, 2021թ.  
ք. Երևան

---

«\_» \_\_\_\_\_ 2021թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ»  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԲՋՋԱՅԻՆ և ՎԵԲ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ և ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	3
ԳԼՈՒԽ 1. ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ.....	3
ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	3
ԲԱԺԻՆ 2. ՀԿԴ ՀԵՌԱՀԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	5
ԳԼՈՒԽ 3. ՀԿԴ ՀԵՌԱՀԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԸ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .....	5
ԳԼՈՒԽ 4. ՀԿԴ ՀԵՌԱՀԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....	6
ԲԱԺԻՆ 3. ՀԿԴ ՀԵՌԱՀԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ .....	6
ԳԼՈՒԽ 5. ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԿԴ ՀԵՌԱՀԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ և ՍՊԱՍԱՐԿՈՒՄ .....	6
ԳԼՈՒԽ 6. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	7
ԳԼՈՒԽ 7. ՀԿԴ ՀԵՌԱՀԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ .....	9
ԳԼՈՒԽ 8. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....	10
ԳԼՈՒԽ 9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ .....	11
ԲԱԺԻՆ 3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՐ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	13
ԳԼՈՒԽ 10. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՐ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԸ.....	13
ԳԼՈՒԽ 11. ԷՀՔ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	14
ԲԱԺԻՆ 4. ԷՀՔ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ.....	15
ԳԼՈՒԽ 12. ԹՈՂԱՐԿՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ԷՀՔ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՑՈՒՄԸ և ՆՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ .....	15
ԳԼՈՒԽ 13. ԷՀՔ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ.....	15
ԳԼՈՒԽ 14. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ .....	16
ԲԱԺԻՆ 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	18

## ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Գլուխ 1. Կանոնների կարգավորման առարկան

- 1.1. Սույն կանոնները (այսուհետ նաև՝ Կանոններ) սահմանում են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Կենտրոնական դեպոզիտարիա) կողմից մշակված հեռահար սպասարկման համակարգերի և էլեկտրոնային հեռահար քվեարկության համակարգի օգտագործման կարգը և պայմանները:
- 1.2. Սույն Կանոնները կիրառելի են միայն այն թողարկողների համար, որոնք Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքել են էլեկտրոնային հեռահար քվեարկության համակարգի ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր, ինչպես նաև անվանական արժեթղթերի այն սեփականատերերի համար, որոնք, մուտք գործելով Կենտրոնական դեպոզիտարիայի հեռահար սպասարկման համակարգեր, կհաստատեն, որ ամբողջությամբ ծանոթացել են և ողջ ծավալով անվերապահորեն ընդունում են սույն Կանոններով սահմանված պայմանները:
- 1.3. Սույն Կանոններով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և Կենտրոնական դեպոզիտարիայի այլ իրավական ակտերով:

### Գլուխ 2. Կանոններում օգտագործվող հասկացությունները

- 2.1. Կանոններում օգտագործված հետևյալ հասկացություններն ունեն ստորև ներկայացված նշանակությունները՝
  - 1) «**ՀԿԴ հեռահար համակարգեր**» Հաճախորդների հեռահար սպասարկման վեր համակարգ և բջջային հավելվածներ, որոնք հնարավորություն է տալիս Օգտատիրոջը էլեկտրոնային սարքի միջոցով իրականացնել սույն կանոններով և ՀԿԴ հեռահար համակարգերի օգտագործման ուղեցույցով սահմանված գործողություններ:
  - 2) «**ՀԿԴ հեռահար համակարգի ուղեցույց**» Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մշակված և պաշտոնական կայքում հրապարակված ուղեցույց, որում նկարագրված են ՀԿԴ հեռահար համակարգերի միջոցով իրականացվող բոլոր գործառնությունների իրականացման քայլերը և որում արտացոլված պայմաններին հետևելը պարտադիր է բոլոր Օգտատերերի համար:
  - 3) «**ԷՀՔ համակարգ**» Բաժնետերերին էլեկտրոնային հեռահար քվեարկություն իրականացնելու հնարավորություն ընձեռնող՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրվող էլեկտրոնային հեռահար քվեարկության համակարգ:
  - 4) «**Օգտատերեր**» Սույն Կանոններով սահմանված կարգով ՀԿԴ հեռահար համակարգերում գրանցված ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև Թողարկողի անունից ԷՀՔ համակարգում գրանցված անձինք:

- 5) «**Հաշվետեր**»՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ունի (որի անունով առկա է) բացված արժեթղթերի հաշիվ, որի սպասարկումը իրականացվում է Հաշվի օպերատորի միջնորդությամբ և/կամ հատուկ դեպքերում ուղղակիորեն Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, որը ՀԿԴ հեռահար համակարգերից օգտվելու ժամանակահատվածում կասեցված կամ փակված չէ:
  - 6) «**Թողարկող**» Բաժնետիրական ընկերություն, որը Հաշվի օպերատորի միջնորդությամբ օգտվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող՝ անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման ծառայություններից և էլեկտրոնային քվեարկություն իրականացնելու նպատակով կնքել է ԷՀՔ համակարգից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:
  - 7) «**Պայմանագիր**» Թողարկողի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված՝ ԷՀՔ համակարգի միջոցով ծառայությունների մատուցման պայմանագիր:
  - 8) «**Էլեկտրոնային հանձնարարական**» ՀԿԴ հեռահար համակարգերի միջոցով էլեկտրոնային եղանակով և տեսքով ձևավորված հանձնարարական:
  - 9) «**Մուտքանուն**» ՀԿԴ հեռահար համակարգեր և/կամ ԷՀՔ համակարգ մուտք գործելու համար նախատեսված անհրաժեշտ տվյալ, որը կարող է բաղկացած լինել թվերից, տառերից և նշաններից:
  - 10) «**Գաղտնաբառ**» ՀԿԴ հեռահար համակարգեր և/կամ ԷՀՔ համակարգ մուտք գործելու համար նախատեսված անհրաժեշտ տվյալ, որը բաղկացած է թվերից, տառերից և նշաններից: Գաղտնաբառի ձևավորման նկատմամբ պահանջները սահմանվում են ՀԿԴ հեռահար համակարգերի և ԷՀՔ համակարգի ուղեցույցներում:
  - 11) «**Պաշտոնական կայք**» Համացանցում գտնված՝ Կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական կայքը ([www.cda.am](http://www.cda.am)):
  - 12) «**Սակագներ**» Կենտրոնական դեպոզիտարիայի «Սակագների մասին կանոններ»:
- 2.2. Կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կենտրոնական բանկի և այլ նորմատիվ իրավական ակտերով, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով, ինչպես նաև այլ կիրառելի իրավական ակտերով և/կամ կանոններով սահմանված նշանակություն:

## **ԲԱԺԻՆ 2. ՀԿԴ ՀԵՌԱՀԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **Գլուխ 3. ՀԿԴ հեռահար համակարգի օգտատերերը և ծառայությունից օգտվելու պարտադիր պայմանները**

3.1. ՀԿԴ հեռահար համակարգի օգտատերերն են այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ունեն (որոնց անունով առկա են) բացված արժեթղթերի հաշիվներ, որոնց սպասարկումը իրականացվում է Հաշվի օպերատորի միջնորդությամբ և/կամ հատուկ դեպքերում ուղղակիորեն Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից և որոնք ՀԿԴ հեռահար համակարգերից օգտվելու ժամանակահատվածում կասեցված կամ փակված չեն:

3.2. Սույն Կանոնների 3.1. կետում նշված Օգտատերերը, մուտք գործելով ՀԿԴ հեռահար համակարգեր, համաձայնվում են սույն Կանոններով և ՀԿԴ հեռահար համակարգերի ուղեցույցով սահմանված պայմաններին:

3.3. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի իր հայեցողությամբ փոփոխել սույն Կանոններով և ՀԿԴ հեռահար համակարգերի ուղեցույցով սահմանված պայմանները: Ծարունակելով օգտվել ՀԿԴ հեռահար համակարգերից Օգտատերը հավաստում է, որ համաձայնվել է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված նոր պայմաններին:

3.4. ՀԿԴ հեռահար համակարգերին միանալիս Օգտատերը հավաստում է, որ սույն Կանոնները չեն խախտում և/կամ սահմանափակում վերջինիս որևէ իրավունք: Օգտատերը հավաստում է նաև, որ տեղեկատվությունը, որը նա տրամադրում է ՀԿԴ հեռահար համակարգերում գրանցվելիս, կեղծ կամ սխալ չէ:

3.5. Ելնելով տեխնիկական կամ այլ անհրաժեշտությունից Կենտրոնական դեպոզիտարիան կարող է փոփոխել, փակել կամ դադարեցնել հասանելիությունը ՀԿԴ հեռահար համակարգերին (ամբողջությամբ կամ մասնակի, մշտապես կամ ժամանակավորապես) ծանուցումով կամ առանց ծանուցման՝ առանց Օգտատիրոջ նկատմամբ որևէ պարտավորության ստանձնման:

3.6. Կենտրոնական դեպոզիտարիան որևէ պատասխանատվություն չի կրում Օգտատերերի և/կամ երրորդ անձանց առջև Օգտատերերի կողմից ՀԿԴ հեռահար համակարգեր ներբեռնված տվյալների ճշտության համար:

3.7. Օգտվելով ՀԿԴ հեռահար համակարգերից և անվերապահորեն համաձայնելով սույն Կանոններին՝ օգտատերը/հաճախորդը նաև անվերապահորեն տալիս է իր համաձայնությունը և թույլտվությունը առ այն, որ, համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Կենտրոնական դեպոզիտարիան անհրաժեշտության պարագայում ՀԿԴ հեռահար համակարգերի պատշաճ գործունեության և վճարումների ապահովման շրջանակներում ներգրավված այլ անձանց տրամադրի օգտատիրոջը/հաճախորդին վերաբերող տեղեկատվություն, որն անհրաժեշտ է ՀԿԴ հեռահար համակարգերի պատշաճ գործունեության ապահովման և/կամ կոնկրետ գործարքի/գործառնության օրինականության առնչությամբ առկա կասկածների և/կամ գործարքի/գործառնության իրականացմանը խոչընդոտող այլ հանգամանքների առկայության պարագայում:

#### **Գլուխ 4. ՀԿԴ հեռահար համակարգի միջոցով մատուցվող ծառայությունները**

4.1. ՀԿԴ հեռահար համակարգերում առկա ողջ տեղեկատվությունը համագործակցության առաջարկ է և հրապարակային օֆերտա կամ հրապարակային պայմանագիր չէ: ՀԿԴ հեռահար համակարգերում կատարվող գործառնությունները համարվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների համաձայն ներկայացված հանձնարարականներ, որոնք Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի կողմից ենթակա են ընդունման կամ մերժման: Ծառայությունները հասանելի են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 9:00-ից 18:00-ն ընկած ժամանակահատվածում:

4.2. ՀԿԴ հեռահար համակարգերը Օգտատերերին տրամադրվում են «Դիտելու և գործարքներ կատարելու» իրավասություններով:

4.2. Սույն Կանոնների 3.1. կետով սահմանված անձանց ՀԿԴ հեռահար համակարգերը տրամադրվում են «Դիտելու և գործարքներ կատարելու» իրավասություններով և դրանց միջոցով մատուցվում են հետևյալ ծառայությունները .

- 1) Արժեթղթերի և Կենսաթոշակային հաշվի մնացորդի դիտում,
- 2) Արժեթղթերով և Կենսաթոշակային հաշվով կատարված գործարքների դիտում,
- 3) Արժեթղթերի փոխանցման հետ կապված հանձնարարագրերի ներկայացում, մասնավորապես՝ ազատ առաքում, ազատ առաքում համաձայնությամբ, առաքում վճարման դիմաց և պորտֆելի փոխանցման հանձնարարականների մուտքագրում:

4.3. Հեռահար համակարգերի միջոցով տրամադրվող ծառայությունների ամբողջական ցանկը և օգտագործման սկզբունքները ներկայացվում են ՀԿԴ հեռահար համակարգի ուղեցույցով:

#### **ԲԱԺԻՆ 3. ՀԿԴ ՀԵՌԱՀԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ**

#### **Գլուխ 5. Օգտատերերի կողմից ՀԿԴ հեռահար համակարգերի ակտիվացում և սպասարկում**

5.1. Ֆիզիկական և իրավաբանական անձ Օգտատերերը ՀԿԴ հեռահար համակարգերը կարող են ակտիվացվել միայն այն դեպքում, եթե տվյալ անձանց արժեթղթերի հաշվում առկա է իրավասու էլեկտրոնային փոստի հասցե:

5.2. ՀԿԴ հեռահար համակարգ մուտք գործելու համար ֆիզիկական անձ Օգտատերը համապատասխան դաշտերում պետք է մուտքագրի հետևյալ տվյալները .

- 1) անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը կամ ՀԾՀ;
- 2) ընտրի այն հաշվի օպերատորին, որի միջոցով սպասարկվում է իր արժեթղթերի հաշիվը:
- 3) տա իր համաձայնությունը սույն Կանոններով և համապատասխան ուղեցույցներով սահմանված պահանջները ընդունելու վերաբերյալ՝ հետևելով ՀԿԴ հեռահար համակարգերի ուղեցույցով սահմանված պարտադիր քայլերին:

5.3. ՀԿԴ հեռահար համակարգեր մուտք գործելու համար իրավաբանական անձ Օգտատերը համապատասխան դաշտերում պետք է մուտքագրի հետևյալ տվյալները .

- 1) ՀՎՀՀ-ն

- 2) ընտրի այն հաշվի օպերատորին, որի միջոցով սպասարկվում է իր արժեթղթերի հաշիվը:
  - 3) տա է իր համաձայնությունը սույն Կանոններով և համապատասխան ուղեցույցներով սահմանված պահանջները ընդունելու վերաբերյալ՝ հետևելով ՀԿԴ հեռահար համակարգերի ուղեցույցով սահմանված պարտադիր քայլերին:
- 5.4. Առաջին մուտքի արդյունքում ավտոմատ կերպով գեներացվում է մուտքանունը (Login) և Օգտատիրոջ՝ համապատասխան արժեթղթերի հաշվում առկա էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվում է ակտիվացման հաստատման հաղորդագրություն:
- 5.5. Առաջին անգամ մուտք գործելիս ՀԿԴ հեռահար համակարգ Օգտատերը գրանցում է գաղտնաբառ (password), որը վերջինիս կողմից կարող է փոփոխության ենթարկվել ցանկացած ժամանակ:

## **Գլուխ 6. Իրավունքներ և պարտականություններ**

- 6.1. Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը իրավունք ունեն .
- 6.1.1. Մերժել որևէ գործարքի կատարումը կամ կասեցնել բոլոր ծառայությունների մատուցումը կամ դրանց մի մասը՝ սխալ, խախտում կամ կեղծիք հայտնաբերելու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի մոտ կասկած է հարուցում գործարքի օրինականությունը:
  - 6.1.2. Տեխնիկական սարքավորումներից ստանալ, մշակել և պահպանել տեղեկատվություն ՀԿԴ հեռահար համակարգերի բնականոն աշխատանքի կազմակերպման նպատակով,
  - 6.1.3. Ելնելով օրենսդրական փոփոխություններից կամ տեխնիկական անհրաժեշտությունից՝ փոփոխել Օգտատերերին ներկայացվող պահանջները կամ այլ պայմանները՝ նախօրոք Օգտատիրոջ էլեկտրոնային փոստի հասցեին այդ մասին ծանուցում ուղարկելու միջոցով,
  - 6.1.4. Ելնելով անվտանգության կամ այլ նկատառումներից՝ ներկայացնել ծրագրաապարատային որոշակի մակարդակի ապահովման պահանջներ:
- 6.2. Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը պարտավոր են .
- 6.2.1. Գործադրել անհրաժեշտ միջոցներ, առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում, ՀԿԴ հեռահար համակարգերի միջոցով մատուցվող ծառայություններից օգտվելու հնարավորությունը պատշաճ որակով ապահովելու համար,
  - 6.2.2. Օգտատերերին տրամադրել տեղեկատվություն կատարված գործառնությունների վերաբերյալ:
  - 6.2.3. Միջոցներ ձեռնարկել ՀԿԴ հեռահար համակարգերի միջոցով փոխանակվող տեղեկատվության գաղտնիության և երրորդ անձանց չլիազորված մուտքերից, օգտագործումից և/կամ բացահայտումից պաշտպանության ուղղությամբ:
  - 6.2.4. Օգտատերերին տեղեկացնել բոլոր այն հանգամանքների առաջացման, փոփոխման կամ վերացման մասին, որոնք էական նշանակություն կարող են

ունենալ սույն կանոններով սահմանված գործողությունները իրականացնելու համար:

6.3. Օգտատերն իրավունք ունի.

6.3.1. Օգտվել ՀԿԴ հեռահար համակարգերի միջոցով մատուցվող ծառայություններից սույն Կանոններով և ՀԿԴ հեռահար համակարգերի ուղեցույցներով սահմանված կարգով:

6.3.2. Ստանալ տեղեկատվություն ՀԿԴ հեռահար համակարգերի միջոցով մատուցվող ծառայությունների, դրանց սակագների և այլ պայմանների վերաբերյալ,

6.3.3. Ստանալ տեղեկատվություն ՀԿԴ հեռահար համակարգերի միջոցով կատարված գործառնությունների վերաբերյալ:

6.4. Օգտատերը պարտավոր է.

6.4.1. Կենտրոնական դեպոզիտարիային տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն,

6.4.2. ՀԿԴ հեռահար համակարգերից օգտվել անձամբ և բացառապես օրինական նպատակների համար:

6.4.3. Պատասխանատվություն կրել նաև երրորդ անձանց իր տվյալների տրամադրման համար և երրորդ անձանց կողմից իր տվյալների օգտագործմամբ կատարված գործարքների համար:

6.4.4. Ձեռնպահ մնալ ՀԿԴ հեռահար համակարգերը սույն Կանոններով և ՀԿԴ հեռահար համակարգերի ուղեցույցով չնախատեսված այլ եղանակով օգտագործելուց:

6.4.5. Ապահովել գաղտնաբառի գաղտնիությունը և պաշտպանվածությունը չարտոնված օգտագործումից:

6.4.6. Վճարել Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի կողմից մատուցված ծառայությունների դիմաց սակագներով սահմանված չափով:

6.4.7. Անմիջապես տեղեկացնել Կենտրոնական դեպոզիտարիային և/կամ Հաշվի օպերատորին ՀԿԴ հեռահար համակարգերի չարտոնագրված օգտագործման բոլոր դեպքերի մասին, ինչպես նաև գաղտնաբառերի՝ երրորդ անձանց առջև բացահայտման կամ դրա սպառնալիքի առաջացման դեպքում: Այդ դեպքում ՀԿԴ հեռահար համակարգերի աշխատանքը դադարեցվում է մինչև նոր գաղտնաբառի տրամադրումը:

6.5. Կենտրոնական դեպոզիտարիան, Հաշվի օպերատորը և Օգտատերերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել սույն Կանոնների շրջանակում փոխանակվող տեղեկությունների գաղտնիության, անվտանգության և պատշաճ պահպանման համար:

6.6. Չնայած այն հանգամանքին, որ Կենտրոնական դեպոզիտարիան պարտավորվում է ապահովել ՀԿԴ հեռահար համակարգերի գործունեության համար անհրաժեշտ սարքավորումների և ծրագրերի անխափան գործունեությունը, այնուամենայնիվ Կենտրոնական դեպոզիտարիան չի տալիս որևէ երաշխիք առ այն, որ ՀԿԴ հեռահար համակարգերը լինելու են հասանելի անընդհատ և աշխատելու է առանց սխալների:



## **Գլուխ 7. ՀԿԴ հեռահար համակարգի միջոցով գործառնությունների իրականացման կարգը և տեղեկատվության ստացումը**

7.1. Օգտատերերի սպասարկումն իրականացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի կանոններով, սույն Կանոններով, ՀԿԴ հեռահար համակարգերի ուղեցույցով սահմանված կարգով և ժամկետներում:

7.2. Օգտատիրոջ կողմից պատշաճ ձևով ձևակերպված, հաստատված և ՀԿԴ հեռահար համակարգերի միջոցով փոխանցված էլեկտրոնային հանձնարարականներն ունեն իրավաբանական ուժ, հավասարազոր են թղթային փաստաթղթերին և հիմք են հանդիսանում Օգտատիրոջ արժեթղթերի հաշիվներով գործողություններ կատարելու համար:

7.3. Կենտրոնական դեպոզիտարիայի և Օգտատիրոջ փոխհարաբերություններում էլեկտրոնային հանձնարարականներ կատարելու նպատակով օգտագործվող էլեկտրոնային տարբերակով փաստաթղթերը համարժեք են համապատասխան թղթային փաստաթղթերին:

7.4. ՀԿԴ հեռահար համակարգի միջոցով բոլոր գործառնությունների իրականացումը և ամբողջ տեղեկատվության ստացումը Օգտատիրոջ կողմից իրականացվում է ինտերնետ կապի միջոցով Կենտրոնական դեպոզիտարիայի Համակարգի հետ կապի ժամանակ: Օգտատիրոջ կողմից ՀԿԴ հեռահար համակարգերի միջոցով Կենտրոնական դեպոզիտարիա ներկայացված հանձնարարականի ընթացքի մեջ գտնվելը չի նշանակում, որ այն միանշանակ կատարվելու է Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի կողմից:

7.5. Հանձնարարականը ստանալու պահից Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը իրականացնում է դրանում լրացված տվյալների համեմատություն Համակարգում գրանցված տվյալների հետ, ստուգում համապատասխանությունը Կենտրոնական դեպոզիտարիայի/հաշվի օպերատորի կանոններին և ընթացակարգերին և ընդունում է ի կատարման: Ընդ որում, եթե գործառնությունը համապատասխանում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված չափանիշներին, ապա Հաշվի օպերատորը (եթե ծառայությունները մատուցվում են առանց հաշվի օպերատորի միջնորդավորման, ապա Կենտրոնական դեպոզիտարիան) պարտավոր է հասանելի կապի միջոցներով կապ հաստատել հանձնարարական ներկայացրած անձի կամ վերջինիս լիազոր ներկայացուցչի հետ և ստանալ լրացուցիչ հավաստիացում գործառնության վերաբերյալ: Մինչ այդ հավաստիացում ստանալը գործառնությունը չպետք է հաստատվի Հաշվի օպերատորի կողմից:

Օգտատերը իր հանձնարարականի կատարման կարգավիճակի մասին տեղեկանում է ՀԿԴ հեռահար համակարգում հանձնարարականի կարգավիճակի փոփոխության մասին էլեկտրոնային հաղորդագրություն ստանալու միջոցով:

7.6. Եթե Օգտատերը ստանում է ծառայողական էլեկտրոնային հաղորդագրության ստուգման բացասական արդյունքի մասին, ապա էլեկտրոնային հանձնարարականի կատարումը համարվում է մերժված, որը արտացոլվում է սույն Կանոնների 7.5. կետով սահմանված կարգով:

7.7. Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը և Օգտատերը կարող են ՀԿԴ հեռահար համակարգերի միջոցով էլեկտրոնային տարբերակով փոխանցել և ստանալ

էլեկտրոնային հանձնարարականներ, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթուղթ:

7.8. Էլեկտրոնային հանձնարարականն առաջացնում է սույն Կանոններով նախատեսված Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի և/կամ Օգտատիրոջ պարտավորություններ, եթե այն Օգտատիրոջ կողմից համապատասխան կարգով ձևակերպված, կողավորված և փոխանցված է ՀԿԴ հեռահար համակարգի միջոցով, իսկ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ստացված, ապակողավորված և ընդունված է ի կատարման:

## **Գլուխ 8. Ծառայությունների դիմաց վճարման կարգը**

8.1. Սույն Կանոնների 4.2. կետով սահմանված ծառայությունների գինը Օգտատերերից գանձվում է Հաշվի օպերատորի սակագներով սահմանված չափով:

8.2. Օգտատերերը ՀԿԴ հեռահար համակարգի ծառայությունների գինը վճարելու համար կարող են ընտրել վճարման հետևյալ եղանակներից մեկը.

8.2.1. Հաշվի օպերատորին սակագներով սահմանված վճարումը իրականացնել ՀԿԴ հեռահար համակարգում ընձեռնված բանկային հեռահար ծառայությունների միջոցով (virtual POS terminal) Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվարկային հաշվին՝ էլեկտրոնային հանձնարարականի մուտքագրմանը զուգահեռ,

8.2.2. Հաշվի օպերատորին սակագներով սահմանված վճարումը իրականացնել Հաշվի օպերատորի հաշվարկային հաշվին՝ նախօրոք, ցանկացած նախընտրելի եղանակով մինչև ՀԿԴ հեռահար համակարգ էլեկտրոնային հանձնարարականի մուտքագրումը;

8.2.3. Հաշվի օպերատորի համաձայնությամբ վճարումները իրականացնել Հաշվի օպերատորի հաշվարկային հաշվին էլեկտրոնային հանձնարարականի/հանձնարարականների կատարումից հետո՝ Հաշվի օպերատորի հետ համաձայնեցված ժամկետներում:

8.3. Օգտատիրոջ կողմից սույն Կանոնների 8.2.2. և 8.2.3. կետերով սահմանված ձևով վճարումների կատարման դեպքում ծառայությունների գինը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ամբողջությամբ գանձվում է Սակագներով սահմանված ժամկետներում Հաշվի օպերատորից՝ անկախ վերջինիս կողմից Օգտատիրոջից ծառայության գինը գանձելու հանգամանքից:

8.4. Օգտատիրոջ կողմից սույն Կանոնների 8.2.1. կետով սահմանված ձևով վճարումը իրականացվելու դեպքում յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվում է վերահաշվարկ, որի արդյունքում .

8.4.1. առաջացած ավել վճարված գումարները Հաշվի օպերատորի հետ համաձայնեցված կարգով կարող են ուղղվել մյուս ծառայությունների դիմաց առաջացած պարտքերը փակելու համար և/կամ մնալ Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվում, որպես տվյալ Հաշվի օպերատորի կողմից կատարված կանխավճար, ինչպես նաև փոխանցվել Հաշվի օպերատորի հաշվարկային հաշվին:

8.4.2. առաջացել է բացասական մնացորդ, որպես որոշակի ծառայությունների մասով Հաշվի օպերատորի կողմից սահմանված է զրոյական սակագնի հետևանք, Հաշվի օպերատորը պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիայի Սակագներով սահմանված կարգով և ժամկետներում փոխանցել այդ

ծառայությունների սակագինը Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվարկային հաշվին:

8.6. Այն դեպքում, երբ Հաշվի օպերատորի կողմից հաստատվել է ՀԿԴ հեռահար համակարգի միջոցով մուտքագրված էլեկտրոնային հանձնարարականը, առանց Օգտատիրոջ կողմից կատարված ծառայության գնի վճարման փաստը և/կամ այդ վճարման մասին նախնական համաձայնություն ձեռք բերելու, ապա Հաշվի օպերատորը պարտավոր է այդ ծառայության գինը Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցել անկախ Օգտատիրոջից այն ստանալու հանգամանքից:

## **Գլուխ 9. Պատասխանատվություն**

9.1. Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում Օգտատիրոջ կողմից իր մուտքանունը և/կամ գաղտնաբառը երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով ՀԿԴ հեռահար համակարգերի ոչ օրինական և երրորդ անձանց կողմից չարտոնված օգտագործման համար:

9.2. Օգտատերը պատասխանատու է՝

9.2.1. Իրեն տրամադրված մուտքի տվյալների (Login, Password) գաղտնիության պահպանման համար:

9.2.2. ՀԿԴ հեռահար համակարգերի ոչ լիազորված կամ երրորդ անձանց չարտոնագրված մուտքի պատճառով առաջացած վնասների համար:

9.2.3. Էլեկտրոնային սարքերից տեղեկատվության արտահոսքի և/կամ գողության կամ կորստի հետևանքով բացահայտված տեղեկատվության արդյունքում հասցված վնասի համար:

9.2.4. Մուտքի տվյալները (Login, Password) իր կողմից երրորդ անձանց հայտնի դարձնելու հետևանքով առաջացած վնասների համար:

9.2.5. Էլեկտրոնային սարքերի՝ ՀԿԴ հեռահար համակարգերի ուղեցույցով սահմանված անվտանգությունը չպահպանելու համար:

9.2.6. ՀԿԴ հեռահար համակարգերով փոխանցված էլեկտրոնային փաստաթղթերի ճշտության և հավաստիության, ինչպես նաև իր կողմից ընտրված կապի միջոցների օգտագործման շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ պահպանվող գաղտնի տվյալներ (ծառայողական տեղեկատվություն, կենսաթոշակային, բանկային, առևտրային գաղտնիք և այլն) կազմող տեղեկությունների հնարավոր կորստի/հրապարակման/ կամ երրորդ անձանց այլ կերպ հայտնի դառնալու համար:

9.2.7. ՀԿԴ հեռահար համակարգերով Կենտրոնական դեպոզիտարիա ուղարկված հանձնարարականի ճշտության և ամբողջականության համար և պետք է ապահովի, որ հանձնարարականում մուտքագրված տվյալները արտահայտեն իր իրական վերջնական նպատակը:

9.3. Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում սույն Կանոնների 9.2. կետով սահմանված դեպքերում, ոչ իր մեղքով Օգտատիրոջ և/կամ Հաշվի օպերատորի կրած վնասների համար:

9.4. Օգտատիրոջ գաղտնաբառի կորստի կամ այն երրորդ անձանց որևէ կերպ հասանելի դառնալու կամ էլեկտրոնային սարքի կորստի կամ գողության դեպքում Օգտատերը տեղեկացնում է Կենտրոնական դեպոզիտարիային և/կամ Հաշվի օպերատորին

հեռախոսակապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով և հայտնում վերոգրյալի մասին՝ պահանջելով արգելափակել համակարգերը:

9.5. Կենտրոնական դեպոզիտարիան բավարարում է Օգտատիրոջ կողմից ՀԿԴ հեռահար համակարգերի արգելափակման պահանջը և այդ մասին հնարավորինս սեղմ ժամկետներում տեղեկացնում է համապատասխան Հաշվի օպերատորներին:

9.6. Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը պատասխանատու չեն պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներից են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Կանոններով սահմանված պարտավորությունների կատարումը:

9.7. Օգտատիրոջ անվճարունակության կամ սնանկացման, իսկ անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց դեպքում՝ նաև Օգտատիրոջ մահվան, անգործունակության դեպքերում Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը պատասխանատվություն չեն կրում Համակարգում գործառնությունների գրանցման համար, քանի դեռ չեն ստացել այդպիսի փաստերի մասին պատշաճ ծանուցում, այդ թվում՝ բավարար փաստաթղթային ապացույցներ: Պատշաճ ծանուցում ստանալու դեպքում այդ ծանուցման ստացմանը հաջորդող աշխատանքային օրվանից Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը կասեցնում է Համակարգում գործառնությունների գրանցումը, մինչև իրավասու անձի կողմից գործառնություններ կատարելու համար պատշաճ լիազորությունների ձեռքբերումը և ձևակերպումը: Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը իրավունք ունեն կասեցնել Համակարգում գործառնությունների գրանցումը նաև այն դեպքում, եթե սույն կետում նշված փաստերի մասին տեղեկատվություն է ստացվել այլ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի կողմից որպես հավաստի գնահատված աղբյուրից:

9.8. Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը իրավասու են մերժել (կասեցնել) Օգտատիրոջ կողմից գործարքի կատարումը.

9.8.1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»

ՀՀ օրենքին և ՀՀ օրենսդրության այլ պահանջներին համապատասխան,

9.8.2. Օգտատիրոջ կողմից ՀՀ օրենսդրության և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների խախտմամբ հանձնարարական մուտքագրելու դեպքում,

9.8.3. Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի սակագներով սահմանված ծառայությունների վճարները չկատարելու դեպքում:

Ընդ որում, Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի՝ սույն կետում նշված գործողությունների արդյունքում Օգտատիրոջ կրած վնասների համար Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը պատասխանատվություն չեն կրում:

9.9. Սույն կանոններով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են Կենտրոնական դեպոզիտարիայի այլ կանոններով, Սակագներով, Կենտրոնական դեպոզիտարիայի, Հաշվի օպերատորի և Օգտատիրոջ միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող այլ փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ

օրենսդրությամբ համապատասխան կարգավորման սահմանված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:

9.10. Կենտրոնական դեպոզիտարիան չի կրում որևէ, այդ թվում նաև ֆինանսական պատասխանատվություն ՀԿԴ հեռահար համակարգերի հասանելիության ընդհատումների և սխալների արդյունքում առաջացած վնասների և կորուստների համար:

### **ԲԱԺԻՆ 3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՐ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **Գլուխ 10. Էլեկտրոնային հեռահար քվեարկության համակարգի օգտատերերը**

10.1. Էլեկտրոնային հեռահար քվեարկության համակարգի (ԷՀՔ համակարգ) Օգտատերերն են .

10.1.1. Այն թողարկողները, որոնք Հաշվի օպերատորի միջնորդությամբ օգտվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման ծառայություններից և Էլեկտրոնային քվեարկություն իրականացնելու նպատակով կնքել են ԷՀՔ համակարգից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

10.1.2. Ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ունեն (որոնց անունով առկա են) բացված արժեթղթերի հաշիվ, որոնց սպասարկումը իրականացվում է Հաշվի օպերատորների միջնորդությամբ և/կամ հատուկ դեպքերում ուղղակիորեն Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, որոնք ԷՀՔ համակարգից օգտվելու ժամանակահատվածում կասեցված կամ փակված չեն:

10.2. Սույն Կանոնների 10.1. կետով սահմանված անձանց ԷՀՔ համակարգը տրամադրվում է միայն Էլեկտրոնային քվեարկություն իրականացնելու նպատակով և կարող է տրամադրվել «Միայն դիտելու» և/կամ «Դիտելու և Էլեկտրոնային քվեարկություն կատարելու» իրավասություններով և որի միջոցով մատուցվում են հետևյալ ծառայությունները .

- 1) Բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ նյութերի ստացում և դիտում;
- 2) Էլեկտրոնային քվեարկություն կատարելու հնարավորություն:
- 3) Բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգային հարցերի քննարկմանը հեռահար կարգով մասնակցելու հնարավորություն:
- 4) Բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգային հարցերի վերաբերյալ Էլեկտրոնային քվեարկության արդյունքների արձանագրում:

10.3. Սույն Կանոնների 10.1. կետով սահմանված անձինք ԷՀՔ համակարգի միջոցով կարող են օգտվել միայն սույն Կանոնների 10.2. կետով սահմանված ծառայություններից և

ՀԿԴ հեռահար համակարգերի միջոցով Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունները վերջիններիս համար կարող են հասանելի չլինել:

## **Գլուխ 11. ԷՀՔ համակարգի միջոցով մատուցվող ծառայությունները**

11.1. ԷՀՔ համակարգը տրամադրվում է օգտատերերին «Միայն դիտելու» և/կամ «Դիտելու և էլեկտրոնային քվեարկություն կատարելու» իրավասություններով:

11.2. Սույն Կանոնների 10.1.1. կետով սահմանված Թողարկողների անունից որպես Օգտատեր գրանցված ժողովի քարտուղարին ԷՀՔ համակարգը տրամադրվում է «Դիտելու և գործառնություններ կատարելու» հետևյալ իրավասություններով .

- 1) ԷՀՔ համակարգին միացած թողարկողների ցանկի դիտում;
- 2) ԷՀՔ համակարգի միջոցով քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակի դիտում;
- 3) Էլեկտրոնային քվեարկությունների ցանկից համապատասխան քվեարկության ընտրում և քվեարկության ժամանակահատվածի դիտում .
- 4) Ժողովի նախապատրաստման նյութերի և ծանուցումների ուղարկում ԷՀՔ համակարգի միջոցով քվեարկող արժեթղթերի սեփականատերերին,
- 5) Քվեարկության արդյունքների հաշվարկում և ուղարկում ԷՀՔ համակարգի միջոցով քվեարկող արժեթղթերի սեփականատերերին,
- 6) Ժողովի արդյունքները ամփոփող փաստաթղթերի ուղարկում ԷՀՔ համակարգի միջոցով քվեարկող արժեթղթերի սեփականատերերին:

11.3. Սույն Կանոնների 10.1.1. ենթակետով սահմանված Թողարկողների անունից որպես Օգտատեր գրանցված դիտորդը ԷՀՔ համակարգը տրամադրվում է «Միայն դիտելու» հետևյալ իրավասություններով .

- 1) Ժողովի քարտուղարի կողմից ուղարկված նյութերի և փաստաթղթերի դիտում;
- 2) Համապատասխան թողարկողի քվեարկությանը միացում,
- 3) Քվեարկության արդյունքների դիտում;
- 4) Ժողովի քարտուղարի հետ հաղորդագրությունների փոխանակում:

11.4. Սույն Կանոնների 10.1.2. ենթակետով սահմանված անձանց ԷՀՔ համակարգը տրամադրվում է «Միայն դիտելու և քվեարկելու» հետևյալ իրավասություններով .

- 1) Ժողովի քարտուղարի կողմից ուղարկված նյութերի և փաստաթղթերի դիտում;
- 2) Համապատասխան թողարկողի քվեարկությանը միացում;
- 3) Քվեարկություն
- 4) Քվեարկության արդյունքների դիտում;
- 5) Ժողովի քարտուղարի հետ հաղորդագրությունների փոխանակում:

## **ԲԱԺԻՆ 4. ԷՀՔ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ**

### **Գլուխ 12. Թողարկողի անունից հանդես եկող օգտատերերի ԷՀՔ համակարգին միացումը և նրանց սպասարկումը**

12.1. Թողարկողի անունից հանդես եկող Օգտատերերը ԷՀՔ համակարգին կարող են հասանելիություն ստանալ միայն տվյալ թողարկողի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային և/կամ Հաշվի օպերատորին պայմանագրով սահմանված կարգով հայտ ներկայացնելու և վերոնշյալ անձանց տվյալները ԷՀՔ համակարգում գրանցվելուց հետո:

12.2. ԷՀՔ համակարգ մուտք գործելու համար օգտատերը համապատասխան դաշտերում պետք է մուտքագրի հետևյալ տվյալները.

- 1) անուն, ազգանուն, հայրանունը,
- 2) գրանցման հասցեն,
- 3) Հեռախոսահամարը,
- 4) էլեկտրոնային փոստի հասցեն,
- 5) անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը;
- 6) ՀԾՀ-ն;
- 7) ընտրի այն թողարկողի ՀՎՀՀ-ն, որի անունից լիազորված է գործել,
- 8) գաղտնաբառը:

12.3. Առաջին մուտքի արդյունքում ավտոմատ կերպով գեներացվում է մուտքանունը (Login) և Օգտատիրոջ էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հեռախոսին հաղորդագրության տեսքով ուղարկվում է ակտիվացման հաստատման հաղորդագրություն:

12.4. Առաջին անգամ մուտք գործելիս ԷՀՔ համակարգ պարտադրում է փոխել ՀԿԴ-ի կողմից տրամադրված գաղտնաբառը (password): Գաղտնաբառը Օգտատիրոջ կողմից կարող է փոփոխության ենթարկվել ցանկացած ժամանակ:

12.5. Սույն Կանոնների 10.1.2. ենթակետով սահմանված անձանց ԷՀՔ համակարգին միացումը իրականացվում է սույն Կանոնների 3-րդ բաժնով սահմանված կարգով:

### **Գլուխ 13. ԷՀՔ համակարգի միջոցով գործառնությունների իրականացման կարգը և տեղեկատվության ստացումը**

13.1. Անձը, որը անցել է ԷՀՔ համակարգում նույնականացման և գրանցման գործընթացը համարվում է համաձայնված ԷՀՔ համակարգի օգտագործման պայմանների հետ և նրա սպասարկումն իրականացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի կանոններով, սույն Կանոններով, ԷՀՔ համակարգի ուղեցույցով և ԷՀՔ համակարգին միանալու պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

13.2. Օգտագործողի հարմարավետության համար ԷՀՔ համակարգի ուղեցույցները տեղադրվում են Կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական կայքում: Ուղեցույցներում արտացոլվում է Օգտագործողի առաջին մուտքի, ԷՀՔ համակարգի օգտագործման տեխնիկական պատկերը, հաջորդական քայլերի նկարագիրը և այլ հարցեր:

13.3. Թողարկողի անունից գործող Օգտատիրոջ կողմից պատշաճ ձևով ձևակերպված, հաստատված և ԷՀՔ համակարգի միջոցով փոխանցված էլեկտրոնային քվեաթերթիկները և

բաժնետերերի ընդհանուր ժողովների վերաբերյալ նյութերը ունեն իրավաբանական ուժ, հավասարազոր են թղթային փաստաթղթերին և հիմք են հանդիսանում քվեարկելու և քվեարկության արդյունքները հաշվելու համար:

13.4. ԷՀՔ համակարգ մուտք գործելու և էլեկտրոնային փաստաթղթերը ԷՀՔ համակարգում հաստատելու համար Օգտագործողը օգտվում է պարզ էլեկտրոնային ստորագրության հնարավորությունից:

13.5. Պարզ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված էլեկտրոնային փաստաթղթերը ճանաչվում են որպես ձեռագիր ստորագրությամբ վավերացված և կնքված փաստաթղթեր:

13.6. Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրած անձին նույնականացնում է ԷՀՔ համակարգում վավերականացման ժամանակ առկա անհատականացնող տվյալների, մուտքանվան և գաղտնաբառի միջոցով: Ցանկացած գործողություն, որը իրականացվում է Օգտատիրոջ կողմից պարզ էլեկտրոնային ստորագրությամբ, համարվում են կատարված այդ Օգտատիրոջ անունից: Եթե Օգտատերը հանդես է գալիս թողարկողի անունից, ապա ԷՀՔ համակարգում Օգտատիրոջ կողմից կատարված բոլոր գործողությունները համարվում են կատարված տվյալ Թողարկողի անունից:

13.7. Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը և Օգտատերը կարող են ԷՀՔ համակարգի միջոցով էլեկտրոնային տարբերակով փոխանցել և ստանալ էլեկտրոնային փաստաթղթեր, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթուղթ:

13.8. ԷՀՔ համակարգին միանալով Օգտատերը համաձայնվում է.

13.8.1. ստանալ հաղորդագրություններ, էլեկտրոնային նամակներ՝ Համակարգում գրանցված իր բջջային հեռախոսին և էլեկտրոնային հասցեին,

13.8.2. որ ԷՀՔ համակարգի միջոցով տեսանյութերի հեռարձակումը կարող է ուղեկցվել պատկերի, ձայնի հետաձգմամբ և դրա ընկալման որակի վրա ազդող այլ խնդիրներով;

13.8.3. ԷՀՔ համակարգը հավելված է, որի բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական դեպոզիտարիային:

13.8.4. ԷՀՔ համակարգում օգտագործվող տարբեր գործառույթները նույնպես բացառիկ իրավունքի օբյեկտներ են:

## **Գլուխ 14. Անվտանգության պահպանում**

14.1. ԷՀՔ համակարգ մուտք գործելու տվյալները (Login, Password), Օգտատերը պետք է պահպանի գաղտնի և այն հասանելի չդարձնի այլ անձանց: Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում Օգտատիրոջ կողմից իր մուտքանունը և գաղտնաբառը երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով ԷՀՔ համակարգի ոչ օրինական և երրորդ անձանց կողմից չարտոնված օգտագործման համար:

14.2. Օգտատերը պատասխանատու է՝

14.2.1. Իրեն տրամադրված մուտքի տվյալների (Login, Password), գաղտնի պահպանման համար:

14.2.2. ԷՀՔ համակարգի ոչ լիազորված կամ երրորդ անձանց չարտոնագրված մուտքի պատճառով առաջացած վնասների համար:



- 14.2.3. Իր էլեկտրոնային սարքերից տեղեկատվության արտահոսքի և/կամ էլեկտրոնային սարքերի գողության կամ կորստի հետևանքով բացահայտված տեղեկատվության արդյունքում հասցված վնասի համար:
  - 14.2.4. Մուտքի տվյալները (Login, Password) իր կողմից երրորդ անձանց հայտնի դարձնելու հետևանքով առաջացած վնասների համար:
  - 14.2.5. Էլեկտրոնային սարքերի անվտանգությունը չպահպանելու համար:
  - 14.2.6. ԷՀՔ համակարգով փոխանցված էլեկտրոնային փաստաթղթերի ճշտության և հավաստիության, ինչպես նաև իր կողմից ընտրված կապի միջոցների օգտագործման շրջանակներում ծառայողական, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հնարավոր կորստի/հրապարակման / կամ երրորդ անձանց այլ կերպ հայտնի դառնալու համար:
  - 14.2.7. ԷՀՔ համակարգով Կենտրոնական դեպոզիտարիա ուղարկված փաստաթղթերի և քվեաթերթիկների ճշտության և ամբողջականության համար:
  - 14.2.8. Կենտրոնական դեպոզիտարիայի Համակարգում իր մուտքանունը և գաղտնաբառը օգտագործելիս իր անհատականացնող տվյալների արդիականության համար:
- 14.3. Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում սույն Կանոնների 14.2. կետով սահմանված դեպքերում, ոչ իր մեղքով Թողարկողի կրած վնասների համար:
- 14.4. Օգտատիրոջ գաղտնաբառի կորստի կամ այն երրորդ անձանց որևէ կերպ հասանելի դառնալու կամ էլեկտրոնային սարքի կորստի կամ գողության դեպքում Թողարկողը տեղեկացնում է Կենտրոնական դեպոզիտարիային և/կամ Հաշվի օպերատորին հեռախոսակապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով և հայտնում վերոգրյալի մասին՝ պահանջելով արգելափակել տվյալ Օգտատիրոջ մուտքը ԷՀՔ համակարգ:
- 14.5. Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանատու է Թողարկողի կողմից ԷՀՔ համակարգի արգելափակման պահանջը ներկայացնելու պահից համակարգերը արգելափակելու համար:
- 14.6. Օգտատերը քվեարկության ընթացքի կարգավիճակի մասին տեղեկանում է ԷՀՔ համակարգում քվեաթերթիկի կարգավիճակի փոփոխության միջոցով:
- 14.7. Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Հաշվի օպերատորը և Թողարկողը պարտավոր են.
- 14.7.1. Իրենց հաշվին ապահովել ԷՀՔ համակարգերի միջոցով քվեարկության համար օգտագործվող իրենց ծրագրա-տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակը:
  - 14.7.2. Չհայտնել երրորդ անձանց (բացառությամբ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի Հաշվետիրոջ լրացուցիչ համաձայնության) ԷՀՔ համակարգում կիրառվող տեղեկատվության պաշտպանության ձևերն ու միջոցները:
  - 14.7.3. Գաղտնի պահել ԷՀՔ համակարգում օգտագործվող տեղեկատվության պաշտպանության միջոցները:
  - 14.7.4. Անմիջապես տեղեկացնել միմյանց վերամշակման, պահպանման, պաշտպանության և տեղեկատվության փոխանցման ենթահամակարգերի ծրագրա-տեխնիկական միջոցների վնասման մասին: Այդ ժամանակ ԷՀՔ համակարգի միջոցով աշխատանքները դադարեցվում են մինչև համակարգի

աշխատունակությունը վերականգնելը:

14.8. Թողարկողը պարտավոր է.

14.8.1. Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցելիս օգտագործել ԷՀՔ համակարգը միայն սարքին և համակարգչային վիրուսներից զերծ էլեկտրոնային սարքեր:

14.8.2. Վճարել Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի կողմից մատուցված ծառայությունների դիմաց սակագներով սահմանված չափով:

14.8.3. Անմիջապես տեղեկացնել Կենտրոնական դեպոզիտարիային և/կամ Հաշվի օպերատորին ԷՀՔ համակարգի չարտոնագրված օգտագործման բոլոր դեպքերի մասին, ինչպես նաև գաղտնաբառերի՝ երրորդ անձանց առջև բացահայտման կամ դրա սպառնալիքի առաջացման դեպքում: Այդ դեպքում ԷՀՔ համակարգի աշխատանքը դադարեցվում է մինչև նոր գաղտնաբառի տրամադրումը:

14.8.4. ԷՀՔ համակարգից հրաժարվելու դեպքում ոչնչացնել իրեն պատկանող բոլոր գաղտնի տվյալները, այդ թվում չփոխանցել երրորդ անձանց:

14.9. Օգտատերը իրավունք ունի.

14.9.1. Օգտագործել ԷՀՔ համակարգը համաձայն ուղեցույցների, Կենտրոնական դեպոզիտարիայի և/կամ Հաշվի օպերատորի մասնագետների կողմից ստանալ խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն ԷՀՔ համակարգի և դրա օգտագործման վերաբերյալ:

#### **ԲԱԺԻՆ 4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

15. Սույն կանոնները ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո՝ Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ սահմանված օրը՝ սույն կանոնների կիրարկումն ապահովող բոլոր փաստաթղթերի և պայմանագրերի ստորագրումից հետո: